Արձանագրություն N 4
Ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ազատյան, Մ. Զաքարյան, Վ. Սոլակյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան
Բացակայում էր՝ Հ. Դավթյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Լ. Հովհաննիսյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ., -օրը՝ 23.08.2019թ., -ժամը՝ 11:30

1.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ -ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 201000 /երկու հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշեց ծանուցել «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Լ. Հովհաննիսյան
Անդամներ՝ ..... Հ. Ազատյան
..... Մ. Զաքարյան
..... Վ. Սոլակյան
Քարտուղար՝ ..... Ի. Եղիազարյան